

## ՔԱՂՎԱԾՔ # 1

### «ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՎՎԿ ՓԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

ք. Երևան

20 ապրիլի 2012թ.

#### **Հարց 2. «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ 2011 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները և շահույթի բաշխման վերաբերյալ:**

1. Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ՝ զեկույցով ելույթ ունեցավ Ընկերության գլխավոր հաշվապահ Բ. Քարամյանը: Ներկայացնելով Ընկերության 2011թ տարեկան գործունեությունը՝ զեկույցողը ներկայացրեց Ընկերության ամփոփ ֆինանսական ցուցանիշները, ակտիվների, եկամուտների և ծախսերի կառուցվածքը, Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունները և տարեկան շահույթի բաշխման առաջարկը՝ 2011 թվականի գործունեության արդյունքներով ստացված շահույթի 5%-ը, որը կազմում է 14,345,000.0 (տասնչորս միլիոն երեք հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամ ուղղել Ընկերության պահուստային հիմնադրամի համալրմանը, իսկ շահույթի մնացած մասը՝ 272,554,500.0 (երկու հարյուր յոթանասուներկու միլիոն հինգ հարյուր հիսունչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ որպես չբաշխված շահույթ թողնել «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ տրամադրության տակ:

Քվեարկության դրվեց Ընկերության 2011 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները և շահույթի բաշխման առաջարկը հաստատելու հարցը:

Օրակարգի երկրորդ հարցի քվեարկության արդյունքները հետևյալն են.

կողմ՝ 100% ձայներին տնօրինող բաժնետեր

դեմ՝ չկա

ձեռնպահ՝ չկա:

Քվեարկության արդյունքում ժողովը միաձայն

## ՈՐՈՇԵՑ

Հաստատել Ընկերության 2011 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները և շահույթի բաշխման առաջարկը՝ 2011 թվականի գործունեության արդյունքներով ստացված շահույթի 5%-ը, որը կազմում է

14,345,000.0 (տասնչորս միլիոն երեք հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամ ուղղել Ընկերության պահուստային հիմնադրամի համալրմանը, իսկ շահույթի մնացած մասը՝ 272,554,500.0 (երկու հարյուր յոթանասուներկու միլիոն հինգ հարյուր հիսունչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ որպես չբաշխված շահույթ թողնել «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ տրամադրության տակ:

Նիստը նախագահող՝

Արթուր Զավադյան

Նիստի քարտուղար՝

Անի Կարապետյան